

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	5
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	7
1.1. Նախատեսվող գործունեության, ենթակառուցվածքների համառոտ նկարագրությունը	7
1.2. Նախագծման նորմատիվ-իրավական հիմքերը	11
2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	15
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	20
Ընդհանուր տեղեկություններ	20
Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն, արտածին երևույթներ և սեյսմիկ բնութագիր	20
Ջրային ռեսուրսներ	23
Կլիմա	24
Մթնոլորտային օդ	28
Հողաբուսական ծածկույթ	29
Կենդանական աշխարհ	33
Բնության հատուկ պահպանվող տարածքներ	36
Պատմամշակութային ժառանգություն	39
Հանքավայրի բնութագիրը	42
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	46
5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	48
5.1. Ընդհանուր բնույթի միջոցառումներ	48
5.2. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիր (բնապահպանական կառավարման պլան)	49
5.3. Հիդրոերկրաբանական մշտադիտարկումների (մոնիտորինգի) իրականացման պլան	52
5.4. Սանիտարական պահպանության գոտի	54
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	57
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	64

ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Նկար 1.	Կոտայքի մարզի ակնարկային քարտեզ: Մասշտաբ 1:300000	4
Նկար 2.	Իրավիճակային սխեմատիկ քարտեզ	8
Նկար 3.	Իրավիճակային հատակագիծ: Մասշտաբ 1:50000	9
Նկար 4.	Բջնի հանքավայրի տարածաշրջանի երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզ	21
Նկար 5.	Բջնի հանքավայրի շրջանի լանջերի թեքության սխեմատիկ քարտեզ	21
Նկար 6.	Բջնի հանքավայրի շրջանի սողանքային մարմինների սխեմատիկ քարտեզ	22
Նկար 7.	ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ	23
Նկար 8.	Հրազդան գետի մշտադիտարկման կետերի սխեմատիկ քարտեզ	25
Նկար 9.	Բջնի հանքավայրի շրջանի կլիմայական գոտիների տարածման սխեմատիկ քարտեզ	26
Նկար 10.	Բջնի հանքավայրի շրջանի հողերի բնական տիպերի տարածման քարտեզ	30
Նկար 11.	Բջնի հանքավայրի շրջանի բուսածածքի բնական տիպերի տարածման քարտեզ	32
Նկար 12.	Բջնի հանքավայրի շրջանի կենդանատեսակների սխեմատիկ քարտեզ	34
Նկար 13.	Բնության հատուկ պահպանվող տարածքների սխեմատիկ քարտեզ	36
Նկար 14.	Հայցվող տարածքի և «Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ բնության հուշարձանի սխեմատիկ քարտեզ	39
Նկար 15.	Մշտադիտարկման վայրերի սխեմատիկ քարտեզ	54

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՐԿԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Մասշտաբ 1:300 000



■ - Բջնիի ածխաբերական հանքային ջրի հանքավայր

Նկար 1.

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածո՝ ընդերքում պարփակված պինդ հանքային գոյացումներ, հեղուկ կամ գազային բաղադրամասեր, այդ թվում՝ ստորերկրյա ջրեր (քաղցրահամ և հանքային) և երկրաջերմային էներգիա, ջրավազանների, ջրհոսքերի հատակային նստվածքներ, որոնց քիմիական կազմը և ֆիզիկական հատկանիշները թույլ են տալիս դրանք օգտագործել ուղղակիորեն կամ վերամշակումից հետո

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական

Ջրերի պահպանում՝ ջրերի աղտոտումը և հյուծումը կանխարգելող ու վերացնող միջոցառումներ

Մանիտարական պահպանման գոտի՝ բնակչության՝ խմելու, առողջապահական, կոմունալ, կենցաղային սպասարկման, բուժիչ, կուրորտային և առողջարարական կարիքների պահանջների բավարարման նպատակով օգտագործվող ջրային ռեսուրսների պահպանման գոտի

Ստորերկրյա ջրեր՝ ջուր (արտեզյան, գրունտային, բնաղբյուր), որը գտնվում է երկրակեղևը կազմող ապարների մեջ հեղուկ կամ գոլորշի կամ կարծր վիճակում

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր՝ մինչև 1գ/լ հանքայնացմամբ ջրեր

Ստորերկրյա հանքային ջրեր՝ բարձր հանքայնացմամբ (1գ/լ-ից ավելի) ջրեր, որոնք պարունակում են առանձնահատուկ միկրոբաղադրիչներ: Հանքային ջրերը գլխավորապես օգտագործվում են առողջարանային բուժման համար և որպես սեղանի զովացուցիչ ջրեր

Ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Շրջակա միջավայր՝ բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործոնների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև

Շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրությամբ փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանձոնների արդյունաձևման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Նախատեսվող գործունեության համառոտ նկարագրությունը

Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանի Չարենցավան համայնքի Բջնի բնակավայրի տարածքում (տես նկար 1-3):

«Յունիվերսալ էքսպորտ» ՍՊԸ դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ ստանալու ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 9/69 հորատանցքով հաշվարկված և հաստատված պաշարից հանքային ջրի արդյունահանման իրավունք՝ արդյունաբերական (շշալցման) նպատակով՝ 20 տարի ժամկետով:

Թիվ 9/69 հորատանցքը գտնվում է թիվ 1/67 հորատանցքից 440.0մ դեպի հյուսիս-արևելք, Հրազդան գետի աջ ափին (տես իրավիճակային հատակագիծը):


Հորատանցքերի տեղագրական կոորդինատներն են՝

Հորատանցքի համարը	I. CK-42 կոորդինատների համակարգով		II. ARM WGS-84 կոորդինատների համակարգով		Հորատանցքի բացարձակ բարձրությունը, մ
9/69	X = 4480968	Y = 8471336	X = 4480961	Y = 8471234	1503.0

Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 1.5 լ/վրկ կամ 47304.0 մ³/տարի: Ընկերությունը նպատակ ունի հանքային ջրի արդյունահանման իրավունք ստանալուց հետո հորատանցքի հարևանությամբ գտնվող իր սեփականությունը հանդիսացող հողատարացքում կառուցված գործարանի տարածքում, որտեղ ընկերությունը պահածոները է արտադրում, նախատեսում է արտադրական տեղամասերից մեկում տեղադրել շշալցման հոսկազիծ և իրականացնել հանքային ջրի շշալցում:

Ընկերության հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է: Հողամասի տարածքը կազմում է 0.47հա, իսկ շինության մակերեսը՝ 1567.26մ² (տես՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը):

ՀՀ Կոտայքի մարզի Բժնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի
իրավիճակային սիւեմատիկ քարտեզ



Նկար 2

ԻՐԱՂՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱ

ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի անխաթվային հանքային
ջրի հանքավայրի թիվ 9/69 հորատանցքի
(հատված K-38-126-B- Ճ թերթից)
Մասշտաբ 1:25 000

Հորատանցքի կոորդինատներն են՝

- I. CK-42 կոորդինատների համակարգով
Հոր. 9/69 x= 4480968 y=8471336
- II. ARM WGS-84 կոորդինատների համակարգով
Հոր. 9/69 x= 4480961 y=8471234

Հորատանցքի բացարձակ բարձ.-նը
Հոր. 9/69 - 1503.0մ



«Յունիվերսալ էքսպորտ» ՍՊԸ-ի տնօրեն

Ա. Աֆրիկյան

Նկար 3.

Շշալցման արտադրամասի համար ժամանակակից սարքավորումների և տեխնիկայի ձեռքբերման և այլ անհրաժեշտ աշխատանքների համար նախնական նախատեսվում է կատարել է մինչև 70000 հազ. դրամի ներդրում: Համայնքում ստեղծվելու է մոտ 20 աշխատատեղ՝ 150000 դրամ միջին աշխատավարձով:

Բացի դրանից ընկերությունը պատրաստ է յուրաքանչյուր տարի ֆինանսական աջակցություն ցուցաբերել համայնքի կարիքների բավարարման համար:

Ընկերությունն օգտվելու է գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից (ջրատար, էլեկտրահաղորդման գծեր և այլն):

Ընկերությունն շշալցված հանքային ջուրը իրացնելու է ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Ընկերությունը ստանալով Բջնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 9/69 հորատանցքի արդյունահանման իրավունքն և իրականացնելով այն կապահովի շուկայի պահանջարկը, կստեղծի նոր աշխատատեղեր, որն իր հերթին կնպաստի Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի և Բջնի գյուղի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը:

Ջրհավաք թիվ 9/69-ի հորատանցքից դեպի հարավ-արևելքում գտնվող շշալցման արտադրամաս հանքային ջրի տեղափոխումն կիրականացվի երկրի մակերեսով 190.0 մ երկարությամբ 50մմ կամ 73մմ տրամագծի խմելու որակի խողովակաշարով՝ պոմպի միջոցով:

Արտադրական և օժանդակ շինությունների կառուցման համար ընկերությունը մինչ օրս ներդրել է մոտ 400.0 մլն դրամ:

Հանքավայրի հանքային ջրի արդյունավետ շահագործման և արտադրության կազմակերպման համար ընկերությունը համալրված է բազմափորձ մասնագետներով:

1.2. Նախագծման նորմատիվ-իրավական հիմքերը

Շրջակա միջավայրը մարդու բնակության և արտադրական գործունեության միջավայրն է, որը պահպանության և իր վրա ազդեցության գնահատման կարիքն ունի:

Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

1. 2011թ. նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք, որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները: ՀՀ Ջրային օրենսգիրք, որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

2. ՀՀ Ջրային օրենսգիրք (ընդունված 04.06.2002), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

3. ՀՀ Հողային օրենսգիրք (Ընդունված է 2001 թվականի մայիսի 2-ին), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

4. ՀՀ Անտառային օրենսգիրք /24.10.2005թ/, որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև

անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

5. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ընդունված 23.11.1999 թ.), որը սահմանում է պետական քաղաքանությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

6. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ընդունված 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների Հայաստանի Հանրապետությունում պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքանությունը:

7. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

8. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

9. ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որով սահմանվում են խախտված հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները և խախտված հողերի դասակարգումն ըստ ռեկուլտիվացման ուղղությունների:

10. ՀՀ կառավարության 05.10.2017թ.-ի N 1267-Ն որոշում, որը կիրառվում է բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների կողմից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու ժամանակ:

11. ՀՀ կառավարության 22.11.2012թ.-ի N 1484-Ն որոշում, որը սահմանում է ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ

ռեժիմային դիտարկումների իրականացումը, որը կապահովի ջրային ռեսուրսները սպառումից և աղտոտումից պահպանելը:

12. «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը:

13. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

14. «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (24.11.2004թ.), որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

15. ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:

16. ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:

17. ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

18. ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ.-ի «Ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգումը հաստատելու և ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 94 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1480-Ն որոշում, որով հաստատվել է ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգումը:

19. ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշում:

20. ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:

21. ՀՀ կառավարության 14.08.2003թ.-ի N 1110-Ն որոշում, որով հաստատվել է ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը:

22. ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:

23. ՀՀ կառավարության 25.01.2005թ.-ի N 91-Ն որոշում, որով հաստատվել է մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը:

24. ՀՀ կառավարության 25.01.2005թ.-ի N 92-Ն որոշում, որով հաստատվել է հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը:

25. ՀՀ կառավարության 24.12.2003թ.-ի N 1746-Ն որոշում, որով հաստատվել են ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները:

26. ՀՀ առողջապահության նախարարի 29.11.2002թ.-ի N 803 հրաման, որով հաստատվել են «Խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ» N-2III.U2-2 սանիտարական կանոնները:

2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանի Չարենցավան համայնքի Բջնի բնակավայրի տարածքում:

Կոտայքը միակ մարզն է, որը միջպետական սահման չունի Հայաստանի հարևան որևէ պետության հետ: Կոտայքը միաժամանակ նաև այն չորս մարզերից մեկն է, որոնք անմիջապես հարում են մայրաքաղաք Երևանին:

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերեսույթից մոտ 900- 2500մ բարձրության վրա: Տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին և միջին ավազանն ու Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Հյուսիսից սահմանափակվում է Գուրանասար, իսկ հյուսիս-արևելքից՝ Հատիսի լեռնազանգվածներով: Հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով՝ ձուլվում է Արարատյան դաշտին:

Մարզի տարածքով են անցնում Երևան-Շորժա և Հրազդան-Իջևան երկաթուղիները, իսկ մարզկենտրոնից մինչև մայրաքաղաք ընդամենը 45 կմ է:

Կոտայքի մարզը զբաղեցնում է 2089 կմ² տարածք: Ըստ 2011 թվականի տվյալների՝ մարզի բնակչությունը կազմում է 254397 մարդ: Մարզի բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 98,08% հայեր են: Ապրում են նաև ռուսներ, եզդիներ, ասորիներ, քրդեր, ուկրաինացիներ և այլ ազգիներ:

Համայնքների թիվը՝ 67, որից քաղաքային՝ 7, գյուղական՝ 60:

Սահմանակից է Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Արագածոտնի մարզերին եւ մայրաքաղաք Երևանին:

ՀՀ Կոտայքի մարզը բաղկացած է երեք տարածաշրջաններից՝ Հրազդանի, Արովյանի և Նաիրիի: Կոտայքի կենտրոնական տարածաշրջանը Հրազդանն է: Մարզկենտրոնն է քաղաք Հրազդանը:

Կոտայքի մարզի տնտեսության գերակա ճյուղերը երկուսն են՝ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը:

Համախառն ներքին արդյունքի ամենամեծ մասնաբաժինը բաժին է ընկնում արդյունաբերությանը: Արդյունաբերության ճյուղերից առաջատար են համարվում էներգետիկայի, մեքենաշինական և սննդի արդյունաբերության, քարամշակման, հանքարդյունահանման, ձկնաբուծության, շինանյութերի և

փայտամշակման ոլորտները:

Արդյունաբերության արտադրանքի մեծ մասը բավարարում է հայաստանյան շուկայի ներքին պահանջները, իսկ մի մասն էլ արտահանվում է արտասահման՝ Ռուսաստանի Դաշնություն, Չինաստան, Վրաստան, Բուլղարիա, Իրանի Իսլամական Հանրապետություն:

Տնտեսության զարգացման հեռանկարները կապված են մշակող արդյունաբերության աճի, հանքային հարստությունների շահագործման և մերձերևանյան գոտում գյուղատնտեսական արտադրանքի ավելացման հետ: Հայաստանի Կոտայքի մարզի տնտեսական ներուժին զգալի վնաս է հասցրել նախկինում տասնյակ հազարավոր աշխատատեղեր ապահովող խոշոր կազմակերպությունների քայքայումը՝ սեփականաշնորհման, հումքի, իրացման շուկաների նվազման կամ բացակայության և հիմնական միջոցների բարոյաֆիզիկական մաշվածության հետևանքով: Մարզի տասնյակ մեքենաշինական, թեթև և սննդի արդյունաբերական ձեռնարկություններ դադարեցրեցին իրենց գործունեությունը կամ էլ սկսեցին աշխատել փոքրածավալ հզորությամբ: Կոտայքի մարզի կայուն զարգացող ոլորտներից է էներգետիկ արդյունաբերությունը: Դրա երաշխիքներն են 17 հիդրոէլեկտրակայանների և «Հրազդան-5» էներգաբլոկի առկայությունը:

Գյուղատնտեսությունը մարզի տնտեսության կարևոր ճյուղերից մեկն է: Հայաստանի այս մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: Բնորոշ է ինտենսիվ ապրանքային ճյուղերի զարգացումը: Մասնագիտացած է, որպես այգեգործական-անասնապահական շրջան՝ ծխախոտագործության ու բանջարաբուծության օջախներով: 2021 թվականի դրությամբ Կոտայքի հողային ֆոնդը կազմել է 209223.2հա, որից գյուղատնտեսական նպատակային նշանակության հողեր՝ 155070.5հա, բնակավայրերի հողեր՝ 15851.9հա, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 3537.6հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 1483.6հա, հատուկ պահպանվող տարածքներ՝ 8692.4հա, անտառներ՝ 22898.9հա, ջրային հողեր՝ 960.8հա:

Մարզի տարածքում են գտնվում հազարից ավելի պատմամշակութային օբյեկտներ՝ կրոնական կառույցներ, հայտնի անձանց տուն-թանգարաններ, խաչքարեր և

այլն: Մարզում զրանցված են ավելի քան 2024 պատմամշակութային արժեքներ եւ հուշարձաններ:

Հրազդանի տարածաշրջանը գտնվում է Հրազդան գետի վերին և միջին ավազանում: Տարածքի մեծ մասն ունի 1500 -2400 մ բարձրություն: Առավելագույն բարձր կետը Թեժ լեռան կատարն է՝ 3101.0 մ: Հյուսիսում ձգվում են Մարմարիկի վտակներով խիստ մասնատված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, արեւելքում՝ Գեղամա լեռնաշղթայի հյուսիս-արեւմտյան լեռնաճյուղերն ու լավային հոսքերը: Հարավ-արեւելքում բարձրանում են Գութանասար, Մենակսար հրաբխային կոները:

Հրազդանում մինչ օրս գործում է ջերմաէլեկտրակայան և ջրաէլեկտրակայան, որոնք բավարարում են Հայաստանի էներգետիկ պահանջների մի մասը: Հրազդանի տարածաշրջանում է գտնվում նաև Չարենցավան քաղաքը, որտեղ խորհրդային տարիներին զարգացած է եղել մեքենաշինական, հաստոցաշինական արդյունաբերությունը, որն այժմ գրեթե վերացել է: Այստեղ է գտնվում նաև Հայաստանի խոշորագույն զբոսաշրջային կենտրոններից մեկը՝ Ծաղկաձոր քաղաքը: Զբոսաշրջային կենտրոններից են նաև Հանքավանը, Արզականը, Աղվերանը:

Տարածաշրջանի գյուղական բնակավայրերն են՝ Ալափարս, Աղավնաձոր, Արզական, Արտավազ, Բջնի, Լեռնանիստ, Կարենիս, Հանքավան, Մարմարիկ, Մեղրաձորը, Սոլակ, Զրառատ, Քաղսի և Ֆանտան:

Չարենցավան համայնքի Բջնի ագղակիր բնակավայրը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Առաջին անգամ նրա մասին հիշատակում է պատմիչ Ղազար Փարպեցին: Գտնվում է Հրազդան գետի աջ ափին, Հրազդան քաղաքից 13.0կմ հեռավորության վրա, միջին բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1550.0 մ:

Բջնի բնակավայրի վարչական տարածքը կազմում է 6925.67հա, որից վարելահողեր՝ 1170հա, խոտհարք՝ 370.2հա, արոտավայր՝ 1745.44հա, դաշտային ճանապարհներ՝ 20հա, արտադրական հողեր՝ 26.71հա, տնաներձ հողեր՝ 154.67հա, դպրոց՝ 1.5հա, հուշարձան՝ 0.08հա, գյուղամիջյան փողոցներ՝ 9հա, պետական պահուստային հողեր՝ 819.68հա, համայնքի սեփականություն հանդիսացող հողեր՝ 2608.39հա:

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ Բջնի բնակավայրի բնակչությունը կազմել է 2760 մարդ, իսկ տնային տնտեսությունների թվաքանակը՝ 772: Բնակչության 51% կազմում են տղամարդիկ և 49%-ը կանայք:

Գյուղում գործում են՝ 1 դպրոց, 1 մանկապարտեզ, 1 մշակույթի տուն, 1 գրադարան:

Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն է, թռչնաբուծությունն և անասնապահությունը: Գյուղն հայտնի է իր հանքային ջրով և շատ պատմամշակութային հուշարձաններով:

Միջին դարերում Բջնին հայ գրչության կարևորագույն կենտրոններից էր: Մեզ են հասել 12-17 դդ. այնտեղ ընդօրինականացված հայերեն մի քանի ձեռագրեր:

Գյուղի տարածքում 1929 թվականի պեղումների ընթացքում հայտնաբերվել է բազմաթիվ մշակութային արժեք ներկայացնող հուշարձաններ, այդ թվում խաչքարեր, դամբարաններ, տապանաքարեր, գետնուղի-գաղտնուղիներ, մի քանի ավերված եկեղեցիների հիմքեր ու փլատակներ: Բջնիի կենտրոնում են գտնվում Սուրբ Գևորգ (8-րդ դար) և Սբ. Աստվածածին (1031 թվական) եկեղեցիները, իսկ հյուսիսարևելյան կողմում՝ բլրի գագաթին, սրբատաշ տուֆից VII դ. կառուցվել է Ս.Սարգիս խաչածն գմբեթավոր եկեղեցին: Եկեղեցու պատերին կան վիմափոր արձանագրություններ, ժայռապատկերների ոճով երկու կենդանապատկեր: Վերանորոգվել է 1947 թվականին:

7-րդ դարի Ս.Սարգիս եկեղեցի



Միջնադարյան ամրոցաշինության նշանավոր կառույցներից մեկը՝ Բջնիի ամրոցը, գտնվում է Հրազդան գետի աջ ափին, գյուղի արևելյան կողմում, անառիկ ժայտերով շրջապատված բարձրադիր հրվանդանի վրա: Հիմնադրման ստույգ ժամանակը հայտնի չէ: Հիշատակվում է վաղ միջնադարից: Պահլավունի իշխանները 10-րդ դարում վերաշինել են քարաժայտերի վրա եղած հինավուրց բերդը, այն դարձրել միջնադարյան Հայաստանի հզոր ամրոց և Բագրատունյաց Հայաստանի Անի մայրաքաղաքը հյուսիսից պաշտպանող կարևոր հենակետ: Ամրոցը գյուղը բաժանում է երկու մասի (Մեծ Բջնի և Փոքր Բջնի): Հարավից, արևելքից և մասամբ արևմուտքից ամրոցը պաշտպանված է վերձիգ, անդնդախոր ժայտերով, իսկ հյուսիսից և արևմուտքից՝

կոպտատաշ որձաքարերով և կրաշաղախով կառուցված, կիսաբոլոր աշտարակներով հզորացված պարսպապատերով, որի երկարությունը հասնում է 120 մ:

Ստորև ներկայացվում է Բջնիի ամրոցի պարիսպները 2007-2008 թվականների վերանորոգումից հետո



Վերջին շրջանում մեծ թափով գյուղում զարգանում է զբոսաշրջությունը՝ ՄԱԿ-ի և համայնքի ջանքերով կառուցվել է թանգարան (Բջնիի ամրոցի հավաքածու), իսկ արևային մարտկոցների շնորհիվ տեղադրվել է լուսավորություն ամրոցի պարիսպների մոտ, որը գիշերային ժամերին մեծ շուք է հաղորդում նրան: Գործում են հյուրատներ և հանգստյան գոտիներ: 2016թ-ին գյուղի տուրիզմը զարգացնելու նպատակով նորոգվել է ճանապարհները

Հանքային ջրերի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել է ազդակիր համայնքի բնակիչներին:

3. ՇՐՋԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ընդհանուր տեղեկություններ. Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանի Չարենցավան համայնքի Բջնի բնակավայրի տարածքում, Չարենցավան քաղաքից 10.0 կմ դեպի հյուսիս, Հրազդան գետի հովտում:

Չարենցավան և Հրազդան քաղաքների միջով է անցնում Երևան-Սևան երկաթգիծը: Հանքավայրի մոտակայքից է անցնում բարեկարգ ասֆալտապատ Երևան-Սևան-Նոյեմբերյան մայրուղին:

Մոտակա երկաթգծի կայան է հանդիսանում ք. Հրազդանը, որն հանքավայրից գտնվում է 20.0 կմ հեռավորության վրա:

Բազմազան ու հարուստ են տարածաշրջանի օգտակար հանածոները: Մեծ արժեք են ներկայացնում նեֆելինային սիենիտների, ոսկու, երկաթի, տիտանի, մարմարի, բազալտի, կրաքարի, պերլիտի, հանքային ջրերի (Արզականի, Բջնիի, Հանքավանի, Քարաշամբի, Արզնիի) և այլ շինանյութերի հանքավայրերը:

Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն, արտածին երևույթներ և սելամիկ բնութագիր.

Հրազդան գետի երկու ափերին, տարածվում են Կոտայքի և Եղվարդի թույլ մասնատված լավային սարավանդերը: Կոտայքի սարավանդն ընկած է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը:

Մարզի հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1200-1300 մետր բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (ծովի մակերևույթից՝ 1700-1800 մետր բարձրության վրա):


Գեոմորֆոլոգիական տեսակետից հանքավայրի տարածքը գտնվում է Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջի սահմաններում, որն իրենից ներկայացնում է բյուրեղային բարձրացում խիստ մասնատված էրոզիոն-կառուցվածքային ռելիեֆով:

Ռելիեֆը խիստ բարդացված է բազմաթիվ համեմատաբար նեղ և խորը Y-ա ձև կիրճերով և ձորակներով:


Թեք ու անտառազուրկ լանջերում շատ են հեղեղատներն ու փոքր հովիտները:

Հանքավայրի հիպսոմետրիկ բացարձակ նիշերը տատանվում են 1480.0-1505.0 մ սահմաններում:

Հանքավայրի երկրաձևաբանական և լանջերի թեքությունների սխեմատիկ քարտեզները բերվում է ստորև 4 և 5 նկարներում՝



Նկար 4.



Նկար 5.

Հայցվող տարածքում արտածին երկրաբանական երևույթների վերաբերյալ տեղեկատվության հիմք է հանդիսանում Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագիրը (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005):

Համաձայն նշված տեղեկագրի, հայցվող տարածքում սողանքային մարմիններ չկան: Հարակից շրջանում՝ Բջնի բնակավայրի կենտրոնից մոտ 4.3կմ հյուսիս-արևելք և հայտնի է Kotayq-126-0530 սողանքային մարմինները, որոնց տեղադիրքը ներկայացված է նկար 6-ում:




A1-23

Նկար 6.

Աղյուսակ 1.

Սողան- քային մարմնի ձածկագիրը	Սողանքային մարմնի կոորդինատները և բարձրությունը							Չափերը		
	Latitude N			Longitude E			Բարձրությունը (մ)			
	Աստ.	Ըոպն	Վայրկ.	Աստ.	Ըոպն	Վայրկ.				
126-0530	40	28	56	44	42	42	1969	900	600	49

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ հայցվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի սպասվելիք արագացման մեծությունը կազմում է 0.4g (նկար 7):



Նկար 7.

Ջրային ռեսուրսներ. Կոտայքի մարզն աչքի է ընկնում ներքին ջրերի առատությամբ: Գետերից Հրազդանը, Գետառը, Ագատը ունեն ռոգզիչ նշանակություն:

Հրաբխածին-նստվածքային ապարների մեջ ներծծված ջրերն աղբյուրների տեսքով դուրս են գալիս լեռների ստորոտներում, ինչպես նաև Հրազդան և Ագատ գետերի կիրճերում:

Տարածաշրջանի գլխավոր ջրային երակն է Հրազդան գետն է, որը սկիզբ է առնում Սևանալճից և թափվում է Արաքս գետը: Գետի երկարությունը 146.0 կմ է: Գետավազանը տարածվում է հյուսիսային լայնության $39^{\circ}96' - 40^{\circ}71'$ և արևելյան երկայնության $44^{\circ}25' - 44^{\circ}96'$ -ի միջև: Տարածքի առավելագույն ձգվածությունը արևելքից արևմուտք 60կմ է, իսկ հյուսիսից-հարավ՝ 80կմ: Ամենաբարձր կետը Գեղմաղան լեռան կատարն է՝ 3319մ: Հոսում է հայցվող տարածքից մոտ 20-25մ հեռավորության վրա:

Դիտարկվող շրջանում Հրազդան գետի աջակողմյան վտակներից են Բջնի և Դալար գետերը: Դալարը սկիզբ է առնում Ծաղկունյաց լեռների արևելյան բազուկներից և Արգակյան գյուղի հարավային մասում աջից միախառնվում Հրազդան գետին: Երկարությունը՝ 13 կմ: Վերին և միջին հոսանքում գետը ձևավորում է նեղ, խորը գետահովիտ, որը աստիճանաբար լայնանում է դեպի Հրազդան դետ թափվելու վայրը: Այստեղ հովիտը լցված է այլուվիալ-դելյուվիալ առաջացումներով: Գետի սնուցման ավազանի մակերեսը կազմում է 120.0 կմ^2 , դեբիտը՝ 0.293 մ^3 , հոսքի մոդուլը՝ 2.4 Լ/վ/կմ^2 :


Բջնի գետը սկիզբ է առնում Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավային լանջից և հոսելով Բջնի գյուղի միջով, թափվում Հրազդան գետը: Երկարությունը 10 կմ է:

Դիտարկվող շրջանում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոլեկտրաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է Հրազդան գետի ջրերի մոնիթորինգ №52 (0.5 կմ գլ. Քաղսիից ներքև) և №54 (0.5 կմ Արգնի ՀԷԿ-ից վերև) դիտակետերում (նկար 8): 2022 թվականին կատարված դիտարկումների համաձայն, գետի ջրերում ֆոսֆատ իոնի պարունակությունը գտնվում է ՍԹԿ սահմաններում:

Կլիմա. Շրջանի կլիման բնութագրվում է մեղմ մայրցամաքային կլիմայով՝ խիստ ամառ և ձմեռ ունեցող կլիմա: Շրջանի կլիման ըստ բարձրության փոխվում է տաք չոր ցամաքայինից մինչև ձյունամերձը: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 10°C -ից մինչև 2.5°C :

Տարվա ամենատաք ամիսը հուլիսն է, իսկ ամենացուրտը՝ հունվարը: Կոտայքի մարզի ցածրադիր շրջաններում միջին հունվարյան ջերմաստիճանը կազմում է $4.5 - 5^{\circ}\text{C}$: Բարձրադիր շրջաններում հունվարյան ջերմաստիճանը նվազում է մեկ և ավելի ջերմաստիճանով՝ -3.6°C :

ՀՐԱԶԴԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ԶՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ



Նկար 8.


Կոտայքի մարզի բարձրադիր շրջաններում ամառվա ամենատաք ամսին գրանցվում է միջինում 8.7°C ջերմություն: Ցածրադիր շրջանների եղանակային պայմանները բավականին տարբեր են: Միջին հուլիս-օգոստոսյան ջերմաստիճանը ցածրադիր գոտիներում կազմում է 22.2°C և ավելի:

Ամենացածր ջերմաստիճանը Կոտայքի մարզում գրանցվում է Աժդահակ լեռան գագաթին: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է՝ 400-970 մմ: Տարբեր ամիսներին տեղում է անձրև, կարկուտ, իսկ ձմեռային ամիսներին՝ ձյուն:

Անսառնամանիք օրերի թիվը մարզի ստորին գոտում կազմում է շուրջ 200 օր:

Ամենուր դիտվում են լեռնահովիտային քամիներ: Օդի բազմամյա միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 67.0%:

Բջնիի հանքավայրի տարածքում կլիման զով է, տաք ամառով (նկար 9):



Նկար 9.

Հայցվող տարածքի կլիմայական բնութագրերը ներկայացվում են ըստ մոտակա Հրազդան օդերևութաբանական կայանի տվյալների (աղյուսակ 2-6):

Աղյուսակ 2.

Օդի ջերմաստիճանի բաշխումը տարվա կտրվածքով

Ամիսներ												Միջին տարեկան, °C
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-8.0	-6.4	-2.0	5.0	10.1	1.8	17.2	17.2	16.5	7.5	1.3	-5.0	5.4

Աղյուսակ 3.

Օդի հարաբերական խոնավությունը

Հստ ամիսների												Միջին տարեկան	Միջին ամսական ժամը 15-ին	
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենացուրտ ամսվա	ամենաշոգ ամսվա
81	78	74	70	69	69	67	65	65	69	76	79	72	69	46

Աղյուսակ 4.

Մթնոլորտային տեղումները և ձնածածկը

Տեղումների քանակը, մմ միջին ամսական/առավելագույն տարեկան												Ձնածածկույթ							
Հստ ամիսների												Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ				
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր								
45	57	63	86	100	69	44	31	32	60	55	46					688	132	129	310
40	47	44	52	52	42	47	42	59	64	45	34					64			

Աղյուսակ 5.

Արևափայլի տևողություն

Հստ ամիսների												Տարեկան գումարա- յին
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
99	114	154	163	228	285	313	304	262	200	130	103	2355

Քամիներ

Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Անհոլությունների կրկնելիությունը %	Միջին ամսական արագությունը մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով օրերի քանակը օր
	Ուղղությունները											
	Հս	Հս- Արլ	Արլ	Հվ- Արլ	Հվ	Հվ- Արմ	Արմ	Հս- Արմ				
հունվար	2	5	11	4	19	39	18	2	27	1.9	2.1	18
	2.3	2.4	2.0	1.4	1.9	2.3	2.4	1.7				
ապրիլ	4	14	19	6	13	21	20	3	15	2.1		
	2.3	2.7	2.2	1.8	1.9	2.3	2.4	2.0				
հուլիս	8	45	35	2	2	3	4	1	7	2.8		
	3.5	3.2	2.9	1.9	2.0	1.9	2.4	2.2				
հոկտեմբեր	3	12	23	6	11	20	22	3	26	1.7		
	2.0	2.2	2.0	1.7	1.8	2.1	2.2	2.0				

Մթնոլորտային օդ

Հայցվող տարածքում, հարակից Արզական և Բջնի բնակավայրերում Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մթնոլորտային օդի որակի մշտադիտարկում չի իրականացվում:

Տարածքում 2022 թվականի հուլիսին կատարվել է մթնոլորտային օդի ֆոնային վիճակի ուսումնասիրություն: Արձանագրվել է ազոտի օքսիդի 0.0138 մգ/մ^3 , ծծմբի երկօքսիդի 0.021 մգ/մ^3 և փոշու 0.05 մգ/մ^3 կոնցենտրացիաներ:

Արդյունահանման աշխատանքների իրականացման ժամանակ տարածքի մթնոլորտային օդի աղտոտվածության գնահատման և մոնիթորինգի նպատակով նախատեսվում է կիրառել «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկի ներկայացված հաշվարկային մեթոդները: Ըստ այդ ուղեցույցի՝ մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են. փոշի՝ 0.2 մգ/մ^3 , ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ^3 , ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ^3 և ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ^3 : Տարածքում

արձանագրվել են հետևյալ ցուցանիշները. ծծմբի երկօքսիդ 0.011մգ/մ^3 , ազոտի երկօքսիդ 0.013մգ/մ^3 , փոշի 0.09մգ/մ^3 :

Որպես սահմանանիշ կարող են ընդունվել նաև ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն հրամանի հավելված 1-ով ամրագրված նորմատիվները: Ըստ նշված փաստաթղթի բնակավայրերում անօրգանական փոշու (SiO_2 պարունակությունը 70% և ավելի) առավելագույն միանվագ ՄԹԿ կազմում է 0.15մգ/մ^3 , միջին օրեկան ՄԹԿ՝ 0.05մգ/մ^3 :

Հողաբուսական ծածկույթ. Կոտայքի մարզի հողաբուսական ծածկույթը բավականին խայտաբղետ է: Գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն, բարձրադիր վայրերում՝ ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը: Սարավանդներին բնորոշ են շագանակագույն հողերը և չոր տափաստանային լանդշաֆտները: Լեռնալանջերին սևահողային ծածկույթի վրա ձևավորվել են լեռնային տափաստաններ: Ծաղկունյաց լեռների և Մարմարիկի հովտի անտառների տակ տարածվում են գորշ դարչնագույն հողերը: Բարձրադիր լեռնային գոտուն բնորոշ է լեռնամարգագետնային լանդշաֆտը: Գետահովիտներում կուլտուրացված ոռոգվող հողեր են: Բարձրադիր մասերում տարածված են խոտհարքներն ու ամառային արոտավայրերը:


Բջնիի հանքավայրի շրջանում զարգացած են դարչնագույն անտառային և մուգ-շագանակագույն հողերը (հողերի բնական տիպերի բաշխվածությունը բերված է նկար 10-ում):

Լեռնաանտառային գոտու դարչնագույն անտառային հողերը ձևավորվել են 700-1700մ բարձրությունների սահմաններում, կիրճերով, ձորակափոսորակային ցանցով խիստ կտրտված ռելիեֆի պայմաններում: Այս հողերը նկարագրվող շրջանում հանդես են գալիս լվացված և կարբոնատային ենթատիպերով:

Լվացված դարչնագույն անտառային հողերը զբաղեցնում են ստվերահայց լանջերը և ձևավորվել են համեմատաբար ավելի խոնավ պայմաններում, քան տիպիկ ենթատիպը:

Արգական և Բջնի գյուղերի տարածքը կազմող դարչնագույն անտառային կարբոնատային հողերը բնութագրվում են դարչնագույն և մուգ-դարչնագույն գույնով, հումուսի բավական բարձր պարունակությամբ (10-14%), որը խորության ուղղությամբ

արագ նվազում է: Հումինային նյութերում հումինաթթուների և ֆուլվոթթուների քանակը զրեթե հավասար է:



Նկար 10.

Հողերը տափաստանացված են, տարալվացված: Հումուսի պարունակությունը կազմում է 8,6%, կլանված կատիոնների քանակը՝ 20,8մ/էկվ 100գ հողում, pH-ը ջրային քաշվածքում՝ 7,9:

Շագանակագույն հողերն ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Շագանակագույն հողերի մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5%-ը՝ ուժեղ քարքարոտ: Տարածված են մուգ-շագանակագույն հողերը:

Հորատանցքի տարաքր բետանապատված է, հողային շերտ տարածքում չկա, ինչը համապատասխանում է սանիտարական պահանջության գոտուն ներկայացվող պահանջներին:


Բուսականության տեսակային կազմի տարածքային տարբերությունը համընկնում է կլիմայի և հողերի վերընթաց գոտիականությանը (նկար 11):

Տափաստանային գոտու բուսականությունը մեր հանրապետությունում տարածված 1400-2400 մ բարձրություններում: Այս գոտուն բնորոշ է փետրախոտային, սիզախոտային, իսկ բարձրադիր մասում՝ հացազգի-տարախոտային բուսականությունը: Տափաստանային գոտու վերին սահմանին մոտ, որտեղ խոնավությունը բավարար է, աճում են մերձալպյան բարձրախոտերը: Այս տարածքները լավ խոտհարքեր են: Տարածված են կարճոտնուկ անտառային, տիպիկ շան, սեզ սողացող, սեզ մագակիր, աշորա մշակովի, գարի մանուշակագույն, հորդելիմում եվրոպական, ցորնուկ դաշտային, բրոմոպսիս անքիստ, բրոմոպսիս խայտաբղետ, տիվարսակ խավոտ, ճոճոուկ դահուրական, փոխածաղիկ հարթ:

Կոտայքի մարզի բուսականության հիմնական տիպերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ: Փամբակի և Ծաղկունյաց լեռների լանջերին աճում են հաճաբենի, կաղնի, բոխի, սոճի, լորենի, կեչի, թեղի, հացենի և այլն: Անտառում տարածված են նաև խնձորենի, տանձենի, սպիտակ և դեղին ակացիա:

Կոտայքի մարզում հատկապես առատ են մշակաբույսերի վայրի ազգակիցները՝ ցորենը, աշորան, գարին, վարսակը, ոլոռը, ճակնդեղը, զանազան հատապտուղներ, կորիզավոր, ունդավոր, կերային, բանջարանոցային բուսատեսակներ և այլն:

Բուն հորատանցքի, սանիտարական պահպանման գոտու սահմաններում համատարած բուսածածկ չկա, քանի որ հորատանցքի բերանի շուրջը կատարված են բետոնապատման աշխատանքներ:



Նկար 11.

Բջնիի հանքավայրի շրջանում պահպանության ներքո գտնվող բուսատեսակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով ուսումնասիրվել է ՀՀ բույսերի կարմիր գիրքը: Ըստ այդմ, Արգական և Բջնի գյուղերի շրջանում հայտնի տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7.


Բուսատեսակը	Կարգավիճակը	Տարածումը	Առանձնահատկությունները	Պահպանության միջոցառումները
1	2	3	4	5
Նեկտարասկորդում եռառտնաչափ	Վտանգված	Արգական, Աղվերան գյուղերի շրջակայք	Աճում է միջին լեռնային գոտուց մինչև ենթալպյան գոտի, ծ. մ. 1700-2500 մ բարձրությունների վրա. անտառային բացատներում, մարգագետիններում, թփերի մացառուտներում, ժայռերի ճեղքերին	Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում
Իժալեզու սովորական	Կրիտիկական վիճակում գտնվող	Արգական գյուղի շրջակայք	Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 900-1800 մ բարձրությունների վրա. կաղնու, կաղնու-բոխու անտառներում	Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Շիկահող» արգելաօգու

Բջնիի հանքավայրի տարածքում աղյուսակ 7-ում նշված բուսատեսակները չեն դիտարկվել:

Կենդանական աշխարհը. Կենդանական աշխարհի տեղաբաշխումն իր հերթին համապատասխանում է բուսական գոտիների դասավորությանը: Կոտայքի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները: Մարզի տարբեր շրջաններում հանդիպում են գայլ, աղվես, լուսան, նապաստակ և այլն:

Մեծ է նաև օձերի տեսակների բազմազանությունը: Կոտայքի մարզի տարբեր գոտիներում հանդիպում են ինչպես անվտանգ, այնպես էլ թունավոր օձեր: Կոտայքի մարզի սողունների գլխավոր ներկայացուցիչներից է հայկական լեռնատափաստանային իծը, որն ապրում է մարզի լեռնային շրջաններում: Այս աշխարհագրական տեղամասում ապրում են նաև մի շարք թռչուններ՝ ալպիական ճայ, կովկասյան մայրեհավ, տափաստանային արծիվ և այլն:

Տափաստանային գոտում համեմատաբար շատ են կրծողները և թռչունները, քիչ են սողուններն ու երկկենցաղները: Լայն տարածում ունեն ճագարամուկը, գետնասկյուռը, դաշտամուկը, խլուրդը, իսկ գիշատիչներից հանդիպում է ժանտաքիսը: Թռչուններից նշանավոր են միջատակեր սարյակները, սևճակատ շամփրուկը, որոնք սնվելով մշակաբույսերին վնասող միջատներով՝ մեծ օգուտ են տալիս գյուղատնտեսությանը:



Նկար 12. Կենդանատեսակների սխեմատիկ քարտեզ

Պահպանվող էկոհամակարգերի վրա ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխտանքների ազդեցությունը գնահատելու նպատակով, կատարվել է ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքերի վերլուծություն: Ըստ ՀՀ բույսերի կարմիր գրքի տվյալների՝ դիտարկվող տարածաշրջանում հանդիպում են հետևյալ բուսատեսակները.

- իշամեղու մարգագետնային և իշամեղու գետնային – ոչ մեծ, ընդհատվող արեալով հազվագյուտ տեսակներ են, հայտնի են Արզական գյուղի շրջակայքում, պահպանվում է «Արզական-Մեղրաձոր» պետական արգելավայրում,

- Ռավագինիի մրջյուն – սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, հայտնի է Արզական գյուղի շրջակայքում, պահպանվում է «Արզական-Մեղրաձոր» պետական արգելավայրում,

- Զուլիանի մրջյուն – խիստ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է, հայտնի է Արզական գյուղի շրջակայքում, պահպանվում է «Արզական-Մեղրաձոր» պետական արգելավայրում,

- Չեռնովի մերկաչք – խիստ սակավաթիվ, նեղ արեալային անհետացող տեսակ, հայտնի է Բջնի գյուղի շրջակայքում, պահպանության միջոցառումներ չեն իրականացվում,

- երևանյան սևամարմին – սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, հայտնի է Արզական գյուղի շրջակայքում, պահպանության միջոցառումներ չեն իրականացվում,

- ապուլոն – խոցելի տեսակ, հայտնի է Արզական գյուղի շրջակայքում, պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցում, «Դիլիջան», «Սևան», «Արևիկ» ազգային պարկում,

- ալեքսանդր առագաստաթիթեռ – խոցելի տեսակ, հայտնի է Արզական գյուղի շրջակայքում, պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում և «Արևիկ» ազգային պարկում,

- ավրորինա դեղնաթիթեռ – հազվագյուտ տեսակ է, հայտնի է Արզական գյուղի շրջակայքում, պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում և «Սևան» ազգային պարկում,

- Բրենթիս Ինո – հազվագյուտ տեսակ է, հայտնի է Արզական գյուղի շրջակայքում, պահպանվում է «Սևան» ազգային պարկում,

- ալկոն կապտաթիթեռ – հազվագյուտ տեսակ է, հայտնի է Արզական գյուղի շրջակայքում, պահպանվում է «Սևան» ազգային պարկում և «Խոսրովի անտառ» արգելոցում,

- արիոն կապտաթիթեռ – տեսակը գտնվում է արեալի սահմանաեզրին, խոցելի տեսակ է, հայտնի է Արզական գյուղի շրջակայքում, պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում և «Խոսրովի անտառ» արգելոցում,


- պրոգերայինա իլիկաթիթեռ – խոցելի տեսակ է, հայտնի է Արզական գյուղի շրջակայքում, պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում,

- ամրակազմ մեղու – ոչ մեծ, կտրտված արեալով հազվագյուտ տեսակ, հայտնի է Արզական գյուղի շրջակայքում, պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում և «Արևիկ» ազգային պարկում:

Բջնիի հանքավայրի տարածքում վերը թվարկած, ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն արձանագրվել:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Բջնիի հանքավայրի շրջանում, հայցվող տեղամասից մոտ 1.5կմ հեռավորության վրա է գտնվում Արզական-Մեղրաձորի պետական արգելավայրը (նկար 13):



Նկար 13.

Արգելավայրը հիմնադրվել է 1971 թվականին, զբաղեցնում է 13532 հա տարածք, գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում, Դարալիկ և Մարմարիկ գետերի ավազաններում, ծովի մակարդակից 1600-2100 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ անտառային հազվագյուտ կենդանիները (բծավոր եղջերու, գորշ արջ, կովկասյան մարեհավ):

ՀՍՍՀ Մինիստրների սովետի 09.04.1971թ.-ի N212 կարգադրությամբ սահմանվել է արգելավայրային ռեժիմ Հրազդանի անտառտնտեսության Արգականի և Մեղրաձորի անտառպետությունների տարածքի վրա:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են համարվում նաև բնության հուշարձանները :

ՀՀ Կոտայքի մարզի հուշարձանների ցանկը համաձայն ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N° 967-Ն որոշման՝


Աղյուսակ 8.

Հ/Հ	Անվանումը	Գտնվելու վայրը
1	2	3
Երկրաբանական հուշարձաններ		
1.	«Անանուն» խզվածքներ	Եղվարդ ավանից հարավ, ավազահանքի մոտ
2.	Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ
3.	«Թագավորանիստ» խարամային կոն	Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
4.	«Պեղիտե փիղ» քարե քանդակ	Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ
5.	«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ	Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
6.	«Ծակ քար» բնական թունել	Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
7.	«Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ	Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
8.	«Անանուն» քարայր սյունաձև բազալտներում	Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
9.	«Անանուն» լանջային երոզիա	Ազատ գետի աջակողմյան ափերին
10.	«Անանուն» լավային ծալքեր	Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
11.	«Անանուն» խորշեր	Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ
12.	«Հատիս» հրաբուխ	Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ
13.	«Ավազան» հրաբխային գմբեթ	Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ
14.	«Կարենիս» հրաբխային գմբեթ	Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ
15.	«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև
16.	«Անանուն» օբսիդիանի ելքեր	Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում
17.	«Անանուն» քարե կուտակումներ	Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում

1	2	3
18.	«Գուրթանասար» հրաբուխ	Ֆանտան գյուղից 3 կմ հվ
19.	«Լեոնահովիտ» քարային կուտակումներ	Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեզխարար» գյուղատեղիի մոտ
20.	Չորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա	գյուղ Չորաղբյուր
Ջրաերկրաբանական հուշարձաններ		
21.	«Հաղարտանք» աղբյուր	Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա
22.	«Համով» աղբյուր	Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
23.	«Քաղցր» աղբյուր	Արզնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա
24.	«Չորի» աղբյուր	Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա
25.	«Ավազան» աղբյուր	Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
Ջրագրական հուշարձաններ		
26.	«Սագերի» լիճ	Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս
27.	«Վիշապա» լիճ	Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ
28.	«Բազմալիճք» լիճ	Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս
29.	«Լուսնալիճ» լիճ	Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ
Կենսաբանական հուշարձաններ		
30.	«Ողջաբերդ» բնապատմական համալիր	Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում
31.	«Ռելիկտային կրկես Քյորոլի լեռան մոտ»	Արտավազ գյուղի մոտ
32.	«Ալպյան գորգ»	Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպասարի գագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա)
33.	«Թանթրվենի Տիգրանի»	Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա

Մոտակա բնության հուշարձանը Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում գտնվող «Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտն է: Բջնիի հանքավայրի թիվ 9/69 հորատանցքի և նշված հուշարձանի միջև հեռավորությունը կազմում է ուղիղ գծով 2կմ (նկար 14):

«Ծակ քար» բնական թունել» բնության հուշարձանը գտնվում է հանքավայրից 2.9կմ հեռավորության վրա:



Նկար 14.

Պատմամշակութային ժառանգություն.

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով՝ գնահատման և փորձաքննության գործընթացում դիտարկվող օբյեկտներ են պատմության և մշակույթի հուշարձանները: Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակները հաստատվել են ՀՀ կառավարության 2007 թվականի N385-Ն որոշմամբ: Ըստ նշված որոշման ՀՀ Կոտայքի մարզի Բջնի բնակավայր տարածքում հաշվառված են հետևյալ հուշարձանները.

Աղյուսակ 9.

Հուշարձանի համարը, ենթահամարը			Անվանումը	Ժամանակը	Գտնվելու վայրը
1	2	3	4	5	6
1			ԱՄՐՈՅ ԲՋՆԻ	5-16 դդ.	գյուղի աե մասում, քարածալի վրա, Հրազդան գետի աջ ափին
	1.1		Մեծ (Վերին) բերդ	10-16 դդ.	քարածալի գագաթին
		1.1.1	Եկեղեցի Սբ. Խաչ	9-10 դդ.	ամրոցի կենտր. մասում
		1.1.2	Ջրամբար	10 դ.	ամրոցի կենտր. մասում
		1.1.3	Պալատ	10 դ.	
	1.2		Ստորին (Փոքր) բերդ	10-16 դդ.	Մեծ բերդից աե
		1.2.1	Գաղտնուղի	10 դ.	
2			ԳԵՐԵՉՄԱՆՈՅ	15-20 դդ.	գյուղի մեջ, Բջնու վանքից հս
3			ԳԵՐԵՉՄԱՆՈՅ	միջնադար	գյուղի մեջ, կամրջի մոտ
4			ԳԵՐԵՉՄԱՆՈՅ	միջնադար	գյուղի հվ եզրին, Խ. Մովսիսյանի տնամերձ հողամասում

1	2	3	4	5	6
5			ԳԵՐԵՋՍԱՆՈՅ	միջնադար	գյուղի մեջ, Սր. Հովհան- նես եկեղեցու մոտ
6			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	9-16 դդ.	գյուղի հվ-ան եզրին, «Խաչի դռ» վայրում
7			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 3-1 հազ.	գյուղի հվ-ան մասում, «Խաչի դռ» վայրում, Հրազդանի ձախսափնյա սարահարթի վրա
8			ԵԿԵՂԵՑԻ	ուշ միջնադար	գյուղից 2 կմ հս, «Մուննաթ» վայրում
9			ԵԿԵՂԵՑԻ ՍՔ. ԲԱՐՕՐՈՒԹՅՈՒՆ	12-13 դդ.	գյուղի մեջ, Բջնի- Հրազդան ճանապարհի ձախ կողմում
10			ԵԿԵՂԵՑԻ ՍՔ. ԳԵՎՈՐԳ.	13-17 դդ.	գյուղի մեջ, Սր. Աստվածածին եկե- ղեցուց 100 մ հվ-ան
11			ԵԿԵՂԵՑԻ ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ	13 դ.	գյուղի մեջ
12			ԵԿԵՂԵՑԻ ՍՔ. ԹԱԴԵՎՈՍ ԱՌԱՔՅԱԼ	13-14 դդ.	գյուղի մեջ
	12.1		Մատուռ	13-14 դդ.	
13			ԵԿԵՂԵՑԻ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ	9-10 դդ.	գյուղի մեջ, Բջնի- Հրազդան ճանապարհի ձախ կողմում
14			ԵԿԵՂԵՑԻ «ԾԱՂԿԱՎԱՆՔ»	13-14 դդ.	գյուղի մեջ, Ս. Մինասյանի տնամերձ հողամասում
	14.1		Գերեզմանոց	միջնադար	
15			ԵԿԵՂԵՑԻ ՍՔ. ՍԱՐԳԻՍ	7 դ., վրկնգ. 1648 թ. և 1990 թ.	Փոքր Բջնի գյուղի աե եզրին, ամրոցից 300 մ հս- ան. ժայռի զազաքին
	15. 1		Գերեզմանոց	9-16 դդ.	եկեղեցուց ամ
16			ԽԱՉՔԱՐ	9-10 դդ.	գյուղի մեջ, Ս. Գրիգորյանի տնամերձ հողամասում
17			ԽԱՉՔԱՐ	9-10 դդ.	գյուղի մեջ
18			ԽԱՉՔԱՐ	10 դ.	գյուղի մեջ, Ս. Գրիգորյանի տնամերձ հողամասում
19			ԽԱՉՔԱՐ	10-11 դդ.	գյուղի մեջ, Ս. Գրիգորյանի տնամերձ հողամասում
20			ԽԱՉՔԱՐ	12 դ.	գյուղի մեջ, Ս. Գրիգորյանի տնամերձ հողամասում
21			ԽԱՉՔԱՐ	12 դ.	գյուղի մեջ, Բ. Սահակյանի տնամերձ հողամասում
22			ԽԱՉՔԱՐ	12 դ.	գյուղի մեջ, դպրոցի մոտ
23			ԽԱՉՔԱՐ	12 դ.	գյուղի աե մասում, Ա. Մաթևոսյանի տնամերձ հողամասում

1	2	3	4	5	6
24			ԽԱՉՔԱՐ	12 դ.	գյուղի հս եզրին, Վ. Աբրահամյանի տնամերձ հողամասում
25			ԽԱՉՔԱՐ	12 դ.	գյուղի հս եզրին, Վ. Աբրահամյանի տնամերձ հողամասում
26			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	գյուղի մեջ, Բարեկամության փող. N 46 տան մոտ
27			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	գյուղի մեջ, Խ. Հակոբյանի տնամերձ հողամասում
28			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	գյուղի հվ եզրին, ճանապարհի աջ կողմում
29			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	գյուղի հվ եզրին, ճանապարհի աջ կողմում
30			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	գյուղի հվ եզրին, Յա. Դավթյանի տնամերձ հողամասում
31			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	գյուղի հվ եզրին, Շ. Դավթյանի տնամերձ հողամասում
32			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	գյուղի հվ-աե եզրին
33			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	գյուղի հս եզրին, Վ. Աբրահամյանի տնամերձ հողամասում
34			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	գյուղի հս եզրին, Շ. Սիմոնյանի տնամերձ հողամասում
35			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	գյուղի հս եզրին, Հ. Սիմոնյանի տնամերձ հողամասում
36			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	գյուղի հս եզրին, Մ. Հովհաննիսյանի տնամերձ հողամասում
37			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	գյուղի հս եզրին, Մ. Հովհաննիսյանի տնամերձ հողամասում
38			ԽԱՉՔԱՐ	13 դ.	գյուղի հս եզրին, Շ. Դավթյանի տնամերձ հողամասում
39			ԽԱՉՔԱՐ	13 դ.	գյուղի հս եզրին, Վ. Աբրահամյանի տնամերձ հողամասում
40			ԽԱՉՔԱՐ	13-14 դդ.	գյուղի հս եզրին, Գ. Սահակյանի տնամերձ հողամասում
41			ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐ	1958 թ.	գյուղի մեջ, Թուխ Մանուկ եկեղեցու մոտ
42			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏՈՒՄ ՋՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1967 թ.	գյուղի մեջ
43			ՄԱՏՈՒՌ	18-19 դդ.	գյուղի մեջ, ալրաղացի մոտ

1	2	3	4	5	6
44			ՍԱՏՈՒՌ ԹՈՒԽ ՍԱՆՈՒԿ (ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ)	12-13 դդ.	գյուղի մեջ
45			ՍԱՏՈՒՌ «ԽԱՆԳՐԱ ԺԱՄ»	ուշ միջնադար	գյուղի հս եզրին, «Վանքի ծոր» վայրում
46			ՍԱՏՈՒՌ «ԿԻՐԱԿՆԱՄՈՒՏ»	միջնադար	գյուղի հվ-ան մասում
47			ՍԱՏՈՒՌ ՍԲ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	20 դ. սկիզբ	գյուղից 0.5 կմ հս
48			ՍԱՏՈՒՌ ՍԲ. ՄԻՆԱՍ	ուշ միջնադար	գյուղից 2 կմ հս

Նշված հուշարձանների և Բջնիի հանքավայրի թիվ 9/69 հորատանցքի միջև նվազագույն հեռավորությունը կազմում է 1.2կմ, հետևաբար որևէ ազդեցություն պատմության և մշակույթի հուշարձանների վրա արդյունահանման աշխատանքների արդյունքում չի դրսևորվելու :

Հանքավայրի բնութագիրը. Բջնիի հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրության նպատակով որոնողա-հետախուզական և հետախուզական աշխատանքները, որոնք ուղեկցվել են ինչպես հանությային, հորատման, այնպես էլ համալիր հիդրոերկրաբանական փորձնական աշխատանքներով կատարվել են 1967-1969թ.թ և 1969-1970թթ-ին:

ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործական պաշարները 01.11.1970թ.-ի դրությամբ հաստատվել են ԽՍՀՄ Պաշարների Պետական Հանձնաժողովի (ՊՊՀ) կողմից (արձանագրություն թիվ 6141, 20.01.1971թ.): Հանքավայրի շահագործական պաշարները հաշվարկվել են չորս հորատանցքերով, այդ թվում՝

Հանքային ջրի պաշարներ՝

1/67 հորատանցքով - B կարգի՝ 7.0 լ/վրկ կամ 604.8 մ³/օր,

3/67 հորատանցքով - B կարգի՝ 0.4 լ/վրկ կամ 34.5 մ³/օր,

8/69 հորատանցքով - B կարգի՝ 1.5 լ/վրկ կամ 129,6 մ³/օր,

9/69 հորատանցքով - B կարգի՝ 1.5 լ/վրկ կամ 129,6 մ³/օր:

Ընդամենը՝ 10.4 լ/վրկ կամ 898.5 մ³/օր

Ազատ ածխաթթու գազի պաշարներ՝

1/67 հորատանցքով - B կարգի՝ 3.2 գ/լ կամ 2.3 մ³/մ³,

3/67 հորատանցքով - B կարգի՝ 3.7 գ/լ կամ 2.5 մ³/մ³,

8/69 հորատանցքով - B կարգի՝ 5.0 գ/լ կամ 3.8 մ³/մ³,

9/69 հորատանցքով - B կարգի՝ 3.1 գ/լ կամ 2.1 մ³/մ³:

Ընդամենը՝ 15.0 գ/լ կամ 10.7 մ³/մ³

Հանքավայրի շահագործական պաշարները կարող են օգտագործվել շշալցման, բուժման և ազատ ածխաթթու գազի կորզման նպատակով¹:

Բջնիի հանքավայրը հանդիսանում է ածխաթթվային հանքային ջրերի ճեղքաբերակային ջրաճնշումային համակարգ, տեղադրված Հրազդանի բեկվածքի գոտու սահմաններում և գենետիկորեն կապված են ուժեղ ջախջախված, ճեղքավորված, մետամորֆացված թերթաքարերի հետ, որոնք պատռված են պալեոզոյան գնանիտուդային ինտրուզիաներով:

Բջնիի հանքավայրի սահմաններում բացահայտված է երկու տեղամաս, որոնք բնորոշվում են տարբեր հիդրոերկրաբանական առանձնահատկություններով:

Առաջին տեղամաս (հիմնական)՝ տեղադրված է Հրազդան գետի աջ ափին և համընկնում է Հրազդանի բեկվածքի ջրառատ թնի հետ, որտեղ ջրի ծախսերը և ջերմաստիճանները մեծ են (մինչև 10.0 լ/վրկ և 40.0 0C):

Երկրորդ տեղամաս՝ տեղադրված է Հրազդան գետի ձախ ափին և համընկնում է Հրազդանի բեկվածքի իջեցված, համեմատաբար խտացված թնի հետ, որտեղ ջրի ծախսերը և ջերմաստիճանները բավականի փոքր են (մինչև 0.4 լ/վրկ և 21.0-30.00C):

Հանքավայրի հիմնական ջրատար արդյունաբերական գոտին, որի հանքային ջրերը բավարարում են կոնդիցիայի պահանջներին հայտնաբերվել է թիվ 9/69 հորատանցքում 124.0-165.0մ միջակայքերում և ներկայացված են ուժեղ ջախջախված, ճեղքավորված, մետամորֆացված թերթաքարերով, պատռված պալեոզոյան գնանիտուդային ինտրուզիաներով:

Հանքային ջրերի ռեժիմը տարեկան կտրվածքում արտահայտվում է ծախսի, ջերմաստիճանի և քիմիական կազմի կայունությամբ:

Հանքավայրի հորատանցքերը շատրվանում են հիմնականում գազլիֆտի հաշվին դինամիկ մակարդակի իջեցումով երկրի մակերեսից ներքև:

Բջնիի հանքային ջրերը ածխաթթվային են (CO₂-98.0-99.6%), թույլ թթվային (pH-6.5-6.6), սիլիկատային (H₂SiO₃-109.0-180.0մգ/լ); Ըստ քիմիական կազմի հիդրոկարբոնատ-նատրիումային են 4.2-6.5գ/լ հանքայնացումով և 16.1-35.50C ջերմաստիճանով:

¹ <file:///C:/Users/HP%20ProBook/Downloads/2322%20-%20Protokol.pdf>

Հանքավայրի հորատանցքերում լուծված ածխաթթու գազի (CO₂) պարունակությունը կազմում է 1.1-1.8գ/լ, իսկ ազատ CO₂ գազինը՝ 3.1-5.0գ/լ:

Սպեցիֆիկ միկրոկոմպոնենտների չնչին քանակի պարունակությունը չի գերազանցում թույլատրելի սահմանները:

Հանքային ջրի մանրէաբանական կազմը բարվոք է:

Ջրի քիմիական անալիզները կատարվել են Երկրաբանական վարչության «Կենտրոնական», այժմ «Անալիտիկ» և ՀՀ Ազգային ակադեմիայի երկրաբանական ինստիտուտի հիդրոքիմիայի լաբորատորիաներում, իսկ հսկիչ անալիզները՝ ՀՀ առողջապահության նախարարության «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ լաբորատորիայում:

Հանքավայրի ջրերը կարելի է հաջողությամբ օգտագործել որպես բուժիչ-խմելու ջուր, ինչպես շշալցման, այնպես էլ հանքաջրաբուժական նպատակով:

1980 թ.-ին թիվ 9/69 հորատանցքի կողքը հորատվել է ջրհավաք թիվ 4-ԷԿ հորատանցքը, որպես 9/69 հորատանցքի կրկնորդ:

Թիվ 9/69 (4-ԷԿ կրկնորդ) հորատանցքը գտնվում է 1/67 հորատանցքից 440.0մ դեպի հյուսիս-արևելք, Հրազդան գետի աջ ափին (տես իրավիճակային հատակագիծը):

Հորատանցքի կոորդինատներն են՝

Հորատանցքի համարը	I. CK-42 կոորդինատների համակարգով		II. ARM WGS-84 կոորդինատների համակարգով		Հորատանցքի բացարձակ բարձրությունը, մ
9/69	X = 4480968	Y = 8471336	X = 4480961	Y = 8471234	1503.0

Թիվ 9/69 հորատանցքով կտրվել է հանքային ջրի 1 ջրատար հորիզոն տեղադրված 124.0-165.0մ խորության վրա: Հանքային ջրի ստատիկ մակարդակը 2.07մ երկրի մակերևույթից ներքև է, ջերմաստիճանը կազմում է 16.1°C, ծախսը՝ 1.5լ/վրկ, հանքայնացումը՝ 5.8գ/լ, լուծված ածխաթթու գազի պարունակությունը՝ 1.8գ/լ, իսկ ազատ գազինը՝ 3.1գ/լ: Ըստ քիմիական կազմի՝ հանքային ջուրը հիդրոկարբոնատ-նատրիումային է:

Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 1.5 լ/վրկ կամ 47304.0 մ³/տարի:

«Յունիվերսալ Էքսպորտ» ՍՊԸ դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ ստանալու ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 9/69 հորատանցքով հաշվարկված և հաստատված պաշարից հանքային ջրի արդյունահանման իրավունք՝ արդյունաբերական (շշալցման) նպատակով՝ 20 տարի ժամկետով:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրը դա մարդու բնակության և արտադրական գործունեության միջավայրն է, որը պահպանության և ազդեցության գնահատման կարիք ունի:

Շրջակա միջավայրի պահպանության հիմնական խնդիրներն են շրջակա միջավայրի բնական վիճակի պահպանումը, վերականգնումը, վնասագերծումը, բնական պաշարների խելամիտ օգտագործումը, շրջակա միջավայրի վրա ֆիզիկաքիմիական, կենսաբանական, մեխանիկական, ռադիոակտիվ և այլ վնասակար ազդեցությունների նվազեցումն ու կանխումը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը դա շրջակա միջավայրի վրա բնածին և մարդահարույց ներգործության էկոլոգիական հետևանքների վերլուծություն է՝ շրջակա միջավայրի որակի պահպանման և բնակչության էկոլոգիական անվտանգության ապահովման նպատակով: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դեպքում իրականացվում է մթնոլորտային օդ և մակերևութային ջրերի մեջ արտանետվող աղտոտող նյութերի քանակի և բաղադրության մշտական հաշվառում և չափումներ, մշակվում են դրանց կրճատման և կանխման միջոցառումներ: Շրջակա միջավայրի վիճակի գնահատման համար սահմանվում են աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ, սահմանային թույլատրելի արտանետումներ և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվներ:

Մարդն իր արտադրական գործունեությամբ մշտապես ազդում է շրջապատող բնության վրա: Այդ ազդեցության հետևանքով բնական միջավայրը կարող է բարելավվել (ծառատնկում, ոռոգում և այլն), դառնալ ավելի բարենպաստ մարդու կյանքի ու գործունեության համար, կամ էլ խաթարվել, քայքայվել:

Մարդու աշխատանքային գործունեության հետևանքով շրջակա միջավայրը կարող է խաթարվել երկու դեպքում: Առաջին, երբ մարդը բնությունից կորզում է և օգտագործում է նրա տարրերը ոչ այն չափով, որքան կարելի է և ոչ այնտեղ, որտեղ կարելի է: Երկրորդ, երբ մարդը բնությանն է վերադարձնում արտադրական կամ կենցաղային այնպիսի թափոններ և այն քանակով, որ բնությունը չի կարողանում ինքնամաքրվել:

Երկու դեպքերում էլ տեղի է ունենում բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտում, և հասունանում է էկոլոգիական ճգնաժամը, ապա և աղետը:

Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/67 և 8/69 հորատանցքերի շահագործման բազմամյա փորձը ցույց է տվել, որ արդյունահանման աշխատանքների ընթացքում որևիցե տեխնածին ճնշումներ հանքավայրի շրջակայքի մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա չեն դրսևորվել, քանի որ, հանքային ջրի արդյունահանման ընթացքում փոշու և վնասակար նյութերի արտանետումներ չի կատարվել, իսկ կենցաղային աղբը տեղափոխվել է մոտակա աղբավայրի կետեր:

Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրում բացակայում են սողանքային երևույթները, մոտակայքում կան արդյունաբերական, բնակելի և տնտեսական շինություններ:

Ընկերությունն օգտվելու է գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից՝ գազատար, ջրատար, էլեկտրահաղորդման գծեր և կոյուղագծեր, իսկ հանքավայրի շահագործման (շշալցման) համար նոր օժանդակ շինությունների կառուցում չի նախատեսվում:

Հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կահավորվելու է համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ, ինչի նպատակն է հանքային ջրերի պահպանությունը և աղտոտման կանխարգելումը:

Ջրհավաք հորատանցքի շուրջը գոյություն ունի սանիտարական պահպանության առաջին (խիստ ռեժիմի) գոտին, որը ցանկապատված է տուֆ քարով և ապահովված է պահպանությամբ:

Ընկերությունը հանքային ջրի շշալցման գործունեությունը իրականացնելու է հորատանցքից 190.0մ դեպի հարավ-արևելք գտնվող իր սեփականությունը հանդիսացող տարացքի շշալցման արտադրամասում:

Հանքավայրի հանքային ջրի արդյունավետ շահագործման և արտադրության կազմակերպման համար ընկերությունը համալրված է բազմափորձ մասնագետներով:

5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

5.1. Ընդհանուր բնույթի միջոցառումներ

Մարդկային արտադրական գործունեությունը միաժամանակ լուրջ վտանգ կարող է սպառնալ շրջապատող միջավայրին, եթե այն իրականացվի առանց հաշվի առնելու ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջապատող միջավայրի պահպանության պայմանները:

Համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (հոդված 64), ընդերք շահագործողները պարտավոր են ապահովել շրջակա միջավայրի պահպանության պայմաններն ու պահանջները, իրականացնելով հետևյալ միջոցառումների իրականացումը՝

- մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, կենդանական և բուսական աշխարհի պաշտպանությունն ու պահպանումը,
- բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմի պահպանումը,
- ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացիայի, ծառատնկման, կանաչապատման աշխատանքների իրականացումը, մշակված հանքային տարածությունների վերականգնումը,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթարկված փաստաթղթերի պահանջների ու միջոցառումների կատարումը,
- շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովումը և այլն:.

Ջրհավաք հորատանցքերի շահագործման աշխատանքները կիրականացվեն՝ հաշվի առնելով ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջակա միջավայրի և բնապահպանության ոլորտների ՀՀ օրենսդրության պահանջները, որոնք ներառում են հետևյալ հիմնական միջոցառումները.

- պահպանել աշխատանքների կատարման համար հողահատկացման սահմանված կարգը,
- բնական պայմանների խախտման բացասական երևույթների վերացում,
- բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և շրջակա միջավայրի պահպանման համար առանցքային միջոցառումների ձեռնարկումը,
- աշխատանքների վարման անվտանգ ձևերի ընտրություն և այլն:

Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման երկարամյա փորձը գալիս է հավաստելու, որ դրանց պաշարների արդյունաբերական յուրացումն քաղաքական ազդեցություն չի թողնում շրջակա միջավայրի վրա:

Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում Բջնի գյուղի տարածքում, բնակելի շենքերի հարևանությամբ, հանքավայրի տեղամասում չկան անտառային ծածկույթներ, բացակայում են սողանքային երևույթները և այլն:

Հանքավայրի հիպոտեզային բացարձակ նիշերը տատանվում են 1480.0-1505.0մ սահմաններում:

Հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելավայրեր և ապրելավայրեր:

Համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի և «Թափոնների մասին» ՀՀ օրենքի՝ ընդերքօգտագործման թափոններ են համարվում օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման, վերամշակման և հարստացման արդյունքում առաջացած մակաբացման ապարներ և այլ թափոններ:

Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 9/69 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման ժամանակ ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանում:

Աշխատանքների կատարման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հաշվի առնելով աշխատանքների բնույթը, կլիմայի աննշան և չի հանգեցնի էկոհամակարգերի վրա քաղաքական ճնշումների դրսևորմանը:

5.2. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիր (բնապահպանական կառավարման պլան)

Ջրհավաք հորատանցքի արդյունավետ շահագործման հիմնական պահանջները հետևյալն են՝

1. Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական

պահպանության առաջին խիստ ռեժիմի գոտիի առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:

2. Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործումը պետք է իրականացնել հատուկ ջրհավաք (կապտաժային) հորատանցքից կահավորված չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով: Շահագործման ժամանակ չի թույլատրվում շահագործվող ջրհավաք հորատանցքից ՊՊՀ-ի կողմից հաստատված պաշարների չափից ավելի արդյունահանումը:

3. Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հորատանցքի շահագործումը պետք է իրականացվի հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան:

4. Իրականացնել սիստեմատիկ հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիտորինգ) ջրհավաք հորատանցքի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ: Ջրհավաք հորատանցքի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ ներառում է հանքային ջրերի քանակի և որակի նկարագիրը, նրա երկարատև շահագործման պայմաններում, ինչպես նաև հորատանցքի պահպանումը՝ սպառումից, աղտոտումից և աղակալումից:

5. Հանքային ջրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ է ապահովել ջրերի կոնդիցիոն քիմիական կազմի պահպանումը:

6. Հակավթարային միջոցառումներ:

7. Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ արտանետումների կարգավորման միջոցառումներ:

8. Նախատեսվում է հարակից տարածքները չխախտել և չաղտոտել կենցաղային աղբով և այլ տեսակի թափոններով:

9. Հանքավայրի հարակից շրջանում պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում նախատեսվում է.

- առանձնացնել պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով,

- ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը,
- տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

10. Շրջանի կենսաբազմազանության պահպանության նպատակով հանքավայրի շահագործման աշխատանքներին մասնակցող անձնակազմը անցնելու է հատուկ վերապատրաստում և ծանոթանալու է շրջանում հայտնի՝ ՀՀ կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ: ՀՀ կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված տեսակների դիտարկման դեպքում նախատեսվում է կանգնեցնել բոլոր աշխատանքները, հրավիրել համապատասխան որակավորում ունեցող մասնագետների, կատարել մանրակրկիտ հետազոտություններ: Հետազոտությունների արդյունքները կրնանարկվեն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ, կներկայացվի մշակված բնապահպանական միջոցառումների ցանկը:

11. Պահպանվելու են ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի №438 որոշման 43-րդ կետով սահմանված պահանջները և պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման դեպքում աշխատանքները կդադարեցվեն, այդ մասին անհապաղ կտեղեկացվի լիազորված մարմին:

Այս բոլոր պահանջները ընկերության կողմից հաշվի կառնվեն և կիրականացվեն հանքավայրի հորատանցքի շահագործման ընթացքում:

5.3. Հիդրոերկրաբանական մշտադիտարկումների (մոնիտորինգի)

իրականացման պլան

Հանքային ջրերի պաշարները վերականգնման առանձնահատկություն ունեն և շահագործման ընթացքում պահանջում են զուգահեռաբար իրականացնել ջրերի որակի, քանակի, վիճակի և շահագործման ռեժիմի նկատմամբ ուսումնասիրություններ, որը կապահովի գերծ պահել ջրերը աղտոտումից, սպառումից և տեխնածին գործընթացների վնասակար ազդեցությունից:

Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ նախատեսվող և իրականացվող ռեժիմային դիտարկումների նպատակն է՝

- 1) հանքավայրի շահագործման ժամանակ հանքային ջրի քանակի և որակի կայունության պահպանումը.
- 2) հնարավոր սպառման և աղտոտման բացահայտումն ու նախազգուշացումը.
- 3) ստորերկրյա հանքային ջրերի բնական ու խախտված ռեժիմների և դրանց ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրությունը.
- 4) ստորերկրյա հանքային ջրերի ռեժիմի կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների համար տվյալների հավաքագրումը և վերլուծությունը.
- 5) ստորերկրյա հանքային ջրերի աղտոտման և սպառման աստիճանի գնահատման մասին հենակետային տվյալների ստացումը.
- 6) ստորերկրյա հանքային ջրերի շահագործվող հանքավայրերում ջրի ծախսի, ճնշման կամ մակարդակի և ջերմաստիճանի չափումների, ինչպես նաև ֆիզիկաքիմիական անալիզների իրականացումը, ստորերկրյա ջրերի պաշարների վերագնահատման օպերատիվ տվյալների հավաքագրումը, մշակումը և ամփոփումը.
- 7) ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցումը, անվերադարձ ազդեցության կանխարգելումը,
- 8) ամփոփ տվյալների հիման վրա առաջարկությունների մշակումը և ներկայացումը լիազոր մարմնին:

Ելնելով վերոհիշյալից, հանքավայրի թիվ 9/69 հորատանցքի տարածքում համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. N 1484-Ն և 22 փետրվարի 2018թ. N 191-Ն որոշումների հավելվածի, սահմանված կարգով, կիրականացվեն մշտադիտարկումներ (մոնիտորինգ)՝ ջրի ծախսի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումներ, կենսաբազմազանության ուսումնասիրություններ, ինչպես նաև կկատարվեն մթնոլորտային

օդի և հողային ծածկույթի նմուշարկումներ՝ համապատասխան լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար (տե՛ս ստորև բերված աղյուսակ 9-ը և նկար 15-ը):

Ելնելով հանքավայրի հիդրոերկրաբանական պայմաններից և գործող մեթոդական ցուցումներից՝ ջրի ծախսի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումները կկատարվեն 10 օրը մեկ: Ջրի նմուշները քիմիական լաբորատորիայում ենթարկվելու են կրճատ քիմիական անալիզի, որտեղ որոշվելու են – (Na+K), NH₄, Ca, Mg, Fe, Cl, SO₄, NO₂, NO₃, CO₃, HCO₃, SiO₂, H₂S, կոշտությունը, հանքայնացումը, չոր նստվածքը, թթվայնությունը, ջրի ֆիզիկական հատկությունները և այլն:

Աղյուսակ 9.


Մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակությունը

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Հանքային ջուր	հանքավայրի առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտում ընդգրկված թիվ 9/69 հորատանցք	- ջրերի քիմիական կազմ, - մակարդակ, ջերմաստիճան, ջրի ծախս	- նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, - չափումներ	- եռամսյակը մեկ անգամ - 10 օրը մեկ անգամ
Հողային ծածկույթ	հորատանցքի հարակից տարածք	- հողերի քիմիական կազմ, - հողերում նավթամթերքների պարունակությունը	- նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	- տարեկան երկու անգամ
Մթնոլորտային օդ	հորատանցքի հարակից տարածք	- օդի աղտոտում փոշիով և արտանետումներով	- նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	- տարեկան մեկ անգամ
Կենսաբազմազանության ուսումնասիրություն	հորատանցքի հարակից տարածք	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	- տարեկան մեկ անգամ

Ստացված արդյունքները հնարավորություն կնձեռնեն գնահատելու հանքավայրում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները: Արդյունքում կկազմվի հաշվետվություն, որը կներկայացվի «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ն հաշվառման և պահպանման:

Եթե հաստատված պաշարների և մոնիտորինգի արդյունքում ստացված տվյալների միջև նկատվի զգալի տարբերություն, ապա համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. 1480-Ն որոշման պահանջների, անհրաժեշտ կլինի վերագնահատել հանքային ջրի հանքավայրի պաշարները և ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքաբանական փորձաքննության բաժին քննարկման և հաստատման:

Մշտադիտարկման վայրեր սխեմատիկ քարտեզ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Հանքային ջրի մշտադիտարկում
- Մթնոլորտային օդի մշտադիտարկում
- Հողերի մշտադիտարկման տարածք
- Կենսաբազմազանության դիտարկման տարածք

Նկար 15.

5.4. Սանիտարական պահպանության գոտի

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրանց

գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության գոտիների առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:

Ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ պետք է ներառի հանքավայրի վիճակի նկարագիրը՝ հանքավայրի պաշտպանումն աղտոտումից, սպառումից:

Համաձայն Ընդերքի մասին օրենսգրքի հոդված 67-ի ստորերկրյա ջրերի հանքավայրերի շուրջը սահմանվում են սանիտարական պահպանության գոտիներ:

Ածխաթթվային հանքային ջրի բարվոք մանրէաբանական կազմը, շրջապատող միջավայրը, հնարավոր աղտոտող օբյեկտների բացակայությունը սնման և բեռնաթափման մարզերում և ջրատար արդյունաբերական միջակայքի խորը տեղադրված լինելը՝ բարենպաստ պայմաններ են ստեղծում երկրորդ (սահմանափակման գոտու) և երրորդ սանիտարական պահպանության գոտիների անտեսման և միայն առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու կառուցման անհրաժեշտության մասին:

Վերջինս կոչված է հանքային ջրի ֆիզիկական և քիմիական հատկությունների պահպանման, հորատանցքի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելու համար:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտին ընդգրկում է բոլոր այն հորատանցքերը, որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքավայրի շահագործողական պաշարները:

Նկատի ունենալով ջրհավաք թիվ 9/69 հորատանցքի երկրաբանական կտրվածքը, ջրատար արդյունաբերական միջակայքի խորը տեղադրված լինելը և ջրի ճնշումային բնույթը, այն գտնվում է բարենպաստ սանիտարահիգիենիկ և հիդրոերկրաբանական պայմաններում, որտեղ բացառվում է ստորերկրյա ջրերի աղտոտումը:

Հանքավայրի սանիտարական պահպանության գոտու սահմաններում պետք է պահպանվի ռեժիմ, որը կապահովի բարձր սանիտարա-հիգիենիկ պայմաններ և կպաշտպանի հանքային ջրերի հանքավայրը աղտոտումից և սպառումից:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու տարածքը պետք է պլանավորված լինի այնպես, որպեսզի հնարավոր լինի մակերևութային աղտոտված ջրերը հեռացնել գոտու սահմաններից դուրս: Գոտին պետք է պարսպատված լինի ցանկապատով և ապահովված պահպանությունով:

Ջրհավաք թիվ 9/69 հորատանցքը ներառված է առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտիում: Գոտին պարսպատված է տուֆ քարի ցանկապատով և ապահովված պահպանությունով:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու տարածքը անմիջապես հորատանցքերի մոտ պլանավորված է այնպես, որպեսզի հնարավոր լինի մակերևութային աղտոտված ջրերը հեռացնել հորատանցքերի սահմաններից դուրս՝ բետոնապատվում է, ունի թեքություն: Գոտին գտնվում է գետից մոտ 50.0մ հեռավորության վրա և պաշտպանված է գետի վարարումներից:

Ջրհավաք հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կկահավորվի համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ: Սույն աշխատանքները կիրականացվեն ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Հաշվի առնելով ջրհավաք հորատանցքի տեղամասի պայմանները (հորատանցքը գտնվում են Բջնի գյուղի բնակելի շենքերի մոտակայքում, Բջնի-Հրազդան ճանապարհի ձախ կողմում) կառուցված թիվ 9/69 հորատանցքերի համար առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու մակերեսը սահմանվել է 230.0մ²:

Առաջին սանիտարական պահպանության գոտու տարածքում արգելվում են բոլոր տեսակի շինարարական աշխատանքներ, որոնք չունեն անմիջական կապ հորատանցքի շահագործման, վեռակառուցման/վերանորոգման և սպասարկման հետ:

Ընդերքօգտագործողը/ջրօգտագործողը սանիտարական պահպանության գոտու սահմաններում ունի գործունեության բացառիկ իրավունք: Կողմնակի մարդկանց մուտքը, որոնք կապ չունեն հանքավայրի հորատանցքի շահագործման և պահպանության հետ խստիվ արգելվում է:

Արգելվում է յուրաքանչյուր գործունեություն այլ անձի կողմից: Այն կարող է իրականացվել միայն ընդերքօգտագործողի/ջրօգտագործողի համաձայնությամբ:

-198-

К О Н И Я

МИНИСТЕРСТВО ЗАРАБОТКА
А Р М Я Н С К О Й С С Р

Республиканский научно-исследовательский институт
курортологии и физиотерапии им. профессора

А. А. А ко н я н а

Ереван, ул. Абовяна 54

Тел. 2-17-45, 2-19-95

№ 0-30

« 4 » декабря 1970г.

С П Р А В К А

о кондициях на Егнинские минеральные
воды Армянской С С Р

Егнинские минеральные воды являются холодными ($16-22^{\circ}$) и термальными ($34-39^{\circ}$), углекислыми, гидрокарбонатными натриевыми (HCO_3^- - 71-77 экв./%, Na^+ - 77-81 экв./%) с повышенным содержанием хлора ($19-22$ экв./%), ирмнистыми (H_2SiO_3 - 109-180 мг/л), средней минерализации ($4,2 - 6,5$ г/л), слабокислыми ($\text{pH} - 6,5-6,6$).

Егнинские воды характеризуются высоким газосодержанием на глубине (CO_2 - 4,5-6,4 г/л). Однако, при выходе на поверхность, вследствие высокой температуры большая часть CO_2 выделяется из воды в виде спонтанного газа, а в растворенном состоянии сохраняется только (в зависимости от температуры) от 1,1 до 1,8 г/л.

Егнинские воды по своим характерным особенностям близки к воде курорта ЕНН (Франция) и могут использоваться в лечебно-питьевых целях, как для розлива, так и для непосредственного лечения.

Директор института

/подпись/

директор мед. наук
профессор

Г.И. Агаджанян

Рун. отд. науч. курорт.

/подпись/

дир. мед. наук

С.С. Тончян

ՀՀ Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ
Բնական բուժական ռեսուրսների ուսումնասիրման և էկոլոգիական բժշկության կենտրոն

Արձանագրություն N 33/2022

Հորատանցքի գտնվելու վայրը և ՀՀ Կոտայքի մարզի Բջնի ածխաբերական հանքավայրի 9/69 հորատանցքի
հանքային ջուր
անվանումը կամ հանքավայրի համարը (փորձարկվող նմուշ, նմուշառման ամսաթիվ և ակտի համար)

Պատվիրատուի տեղանունը «Յունիվերսալ Էքսպորտ» ՍՊԸ, ք. Երևան, Խորենացու Փ/ՇՎ9/ք. 11
(իրավաբանական հասցեն)

Փորձարկման ամսաթիվը << 25.05.2022-02.06.2022 >>

Պատվիրատուի անունը, իրավաբանական հասցեն՝ «Յունիվերսալ Էքսպորտ» ՍՊԸ				
Փորձարկվող նմուշ՝ հանքային ջուր		Նմուշառման ամսաթիվ՝ «25.05.2022» թ.		Ակտի համար՝ №33/2022
Հորատանցքի գտնվելու վայրը՝ ՀՀ Կոտայքի մարզի Բջնի ածխաբերական հանքավայր		Հորատանցքի անվանումը կամ համարը՝ ՀՀ Կոտայքի մարզի Բջնի ածխաբերական հանքավայրի 9/69 հորատանցքի հանքային ջուր		
Քիմիաբանական բաղադրիչներ և ցուցանիշներ		Չափման միավոր	ՄԹԿ և նորմեր	Փաստացի տվյալներ
Հոտը, 20° C -ում		բալ		ստանդ հոտի
Հոտը մինչև 60° C տաքացնելիս		բալ		ստանդ հոտի
Համր		բալ		հանքային ջրին բնորոշ
Գալեր		ստոխճան		1.0
Պղնձություն		ՏՄՊ (NTU)		0
Ջրածնային ցուցիչ (pH-20° C)				6.75
Կատիոններ	Իոնա-ադային կազմ		մգ/դմ³	մգ-էկվ/դմ³
	Լիթիում	Li⁺	<0.01	
	Ամոնիում	NH₄⁺	<0.1	
	Կալիում	K⁺	169.43	4.24
	Նատրիում	Na⁺	1059.0146	46.0644
	Մագնեզիում	Mg²⁺	194.56	16
	Կալցիում	Ca²⁺	264.5	13.2
	Երկվալենտ երկաթ	Fe²⁺	2.8	
	Եռարժեղ երկաթ	Fe³⁺	0.038	
	Մանգան	Mn²⁺	0.002	
	Պղինձ	Cu²⁺	0.1	
	Կադմիում	Pb²⁺	<0.005	
	Ցինկ	Zn²⁺	<0.04	
	Կադմիում	Cd²⁺	<0.001	
	Սելենի	Hg²⁺	<0.0005	
Քլոր (զուտարային) Σ(Cl⁻+Cl²⁻)		<0.04		
Կատիոնների զուտարար		1687.51	79.4798	
Անիոններ	Ֆտորիդներ	F⁻	1.0	100
	Ժլորիդ	Cl⁻	497.0	14
	Բրոմիդ	Br⁻	չ/հ	17.61449
	Իոդիդ	I⁻	չ/հ	
	Սուլֆատ	SO₄²⁻	204.1	4.28
	Կարբոնատ	HCO₃⁻	3733.2	61.2
	Կարբոնատ	CO₃²⁻	չ/հ հալուն.	5.385
	Նիտրիդ	NO₂⁻	0.25	77.00
	Նիտրատ	NO₃⁻	1.0	
Անիոնների զուտարար		4434.3	79.48	

Չդիտացված մուկուլներ		մգ/դմ ³
Ածխաթթու գազ (լուծված)	CO ₂	1500
Մետասիլիկաթթու	H ₂ SiO ₃	88.2
Կոորդինատներ		
Արսեն	As ISO6569	0.54
Օրթոբորատ	H ₂ BO ₃	39.68
Պերմանգանատային օքսիդացում, O ₂ մգ/դմ ³		0.04
Ընդհանուր հանքայնացում, գ/լ	M	6.121
Չոր մնացորդ 180°C, գ/լ		4.3
Չոր մնացորդ 260°C, գ/լ		4.1
Չոր մնացորդ 450°C, գ/լ		3.9
Օրգանական նյութեր (զումարային C _{org})		չ/ն
Լրացուցիչ բաղադրիչներ:		
Ֆորմալդեհիդ HCOH		չի հայտն.
Նաթենաթթուներ		0.6
Ֆենոլ C ₆ H ₅ OH		չի հայտն.

Կուլոմվի ֆորմուլա $M \ 6.12 \quad HCO_3 \ 77.0 \quad pH \ 6.75$
 $(Na+K)63.29Mg^{20}$

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ: ՀՀ Կոտայքի մարզի Բջնի հանքավայրի 9/69 հորատանցքի հանքային աղբյուրի ջրի փորձանմուշի համալիր հետազոտության արդյունքները փաստում են որ այն սառը՝ T-10-15°C, թույլ թթվայինից չեզոք միջավայրով (pH 6.75-7.0), միջին՝ հանքայնացված՝ M 6.12 գ/լ հիդրոկարբոնատային, կատարում-մագնեզիումական բաղադրության (HCO₃ - 77.0 մգ էկվ/%, Mg-20 մգ էկվ/%; (Na+K)63.29 մգ էկվ/%,), սիլիկատային (H₂SiO₃ - 86.4 մգ/դմ³), բորային (H₂BO₃ - 39.62 մգ/դմ³) հանքային ջուր է: Ըստ ԵԱՏՄ 044/2017 Տեխնիկական կանոնակարգի նորմերի և ՀՍ 191-2019 ազգային ստանդարտի այն կարելի է դասակարգել որպես "Բնական բոժիչ-սեղանի հանքային ջուր" դասին: Տեքսիկ էլեմենտների և կենսաբանորեն ակտիվ էլեմենտների քանակները համապատասխանում են ՄՄ ՏԿ 044/2017 և ՀՍ 191-2019 ազգային ստանդարտի նորմերին: Ջուրը կարելի է օգտագործել շշալցման նպատակով:

Փորձարկելու ժամանակ հավաստիությունը հաստատում եմ՝

Կենտրոնի ղեկավար

քիմիկ վերլուծաբան



Կ. Մայսուրյան

Մ. Մտեհիսյան


Ն. Եզեկյան

02.06.2022



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է 29 ապրիլի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՅՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԷՔՍՊՈՐՏ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Չարենցավան գյուղ Բջնի 1-ին փողոց թիվ 22/1

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ներդրման պայմանագիր 15.10.2021թ. գ/մ 13638, ճարտարապետահատակագծային առաջադրանք 03.11.2021թ. թիվ 72, շինարարության թույլտվություն 03.12.2021թ. թիվ 72, ճարտարապետաշինարարական նախագիծ 03.12.2021թ.

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-019-0401-0047

Մակերեսի չափը (հա)՝ 0.46989

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 29042022-07-0106, գաղտնարան՝ JD9B4ZCDSCLE

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ արտադրական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	07-019-0401-0047-001	Սառնարան	614.12 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

1567,26 քմ շինության մասով գրանցման օբյեկտը կառուցվող շինության նկատմամբ կառուցապատողի քաղաքաշինական փաստաթղթերով սահմանված իրավունքներն ու պարտականություններն են: Շինության ավարտվածության աստիճանը 50-80%:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԷՂՎԱՐԴ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԱՍՅԱԿԱՆ N 29042022-07-0106, գաղտնաբառ՝ JD9B4ZCDSCLE

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱՐԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՇԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2020-05-27

«ՅՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԷՔՍՊՈՐՏ»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար 266.110.02086

Հիմնադրման տարի 1996

Գրանցման ամսաթիվ 1996-05-11

Գործունեության ժամկետ Անժամկետ

Կարգավիճակ

Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ
գործունեության (գոյության) դադարման մասին պետական
միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

Իրավաբանական անձի ծածկագիր (ՋԿԴ) 37195688

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 02521162

Առցիալական վճարների պարտավորությունների
անձնական հաշվի քարտի համար (Ապահովագրի
ծածկագիր) 43515418

Էլ. փոստ -

Կայք -

Գտնվելու վայրը

Հասցե ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ. / Ծ / 49 / 11 ԲՆ. ԿԵՆՏՐՈՆ 0018
ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռախոս -

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն Տնօրեն

Անուն Ազգանուն Ա.ԲԵՐՏ ԱՅՐԻԿՅԱՆ ՄԱՆՈՒԿԻ

Անձնագրային տվյալներ 009859117 2018-01-19 011

Հասցե ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ. / Ծ / 49 / 11 ԿԵՆՏՐՈՆ 0018 ԵՐԵՎԱՆ
ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Տեղեկությունների իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) գրառված չեն

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը ՀՀ դրամով՝ 50000

Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը ՀՀ դրամով
ԱԼԵԽՏ ԱՖԴԻԿՅԱՆ ՄԱՆՈՒԿ Անձնագիր N 00985917 արվ. 011 ի տղմից Հասցե՝ ԽՈՐԵՆԱՑՈՒԹ. / Շ / 49 / 11 ՔՆ. ԿԵՆՏՐՈՆ 0018 ԿԵՆՏՐՈՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՏԱՏԱՆ	2019-06-19	100 %	50000

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
1999-11-22	Հիմնադիր փաստաթղթերի համապատասխանեցում ԶՕ դրույթներին
2013-02-15	Գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների գրանցում
2013-08-15	Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխություն
2018-06-07	Անվանման փոփոխություն Իրավաբանական հասցեի փոփոխություն Մասնակիցների տվյալների փոփոխություն Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)
2018-08-21	Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն) Մասնակիցների փոփոխություն
2018-09-04	Մասնակիցների փոփոխություն Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)
2019-06-19	Մասնակիցների փոփոխություն Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)
2020-05-27	Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն

Քաղվածքը տրամադրող՝ ՏԻԳՐԱՆ ՉԱԼԱԲՅԱՆ

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ 2020-05-27



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքի տվյալներ
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
8. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
9. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
10. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
11. “Цветущие уголки биоразнообразия”, FAO, <http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
12. ՀՀ Կոտայքի մարզպետարանի պաշտոնական կայք